ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ-Պետերբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ-Պետերբուրգ), 2023թ. մայիսի 10-ից 14-ը:

Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն 11-րդ Պետերբուրգյան միջազգային իրավաբանական ֆորումին:

Քննարկված թեմաները՝ հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների, դատական ակտերի հարկադիր կատարման, կատարողական վարույթների թվայնացման, էլեկտրոնային հանրային ծառայությունների մատուցման, պրոբացիոն համակարգերի բարեփոխումների, էլեկտրոնային պրոբացիայի հարթակի գործարկման վերաբերյալ և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոյի հրավերով ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը 2023թ. մայիսի 10-ից 14-ը մասնակցել է 11-րդ Պետերբուրգյան միջազգային իրավաբանական ֆորումին (այսուհետ՝ Ֆորում):

Ֆորումի շրջանակում ամենակարևոր հադիպումներից մեկն էր Արդարադատության նախարարների բաց հանդիպումը, որը վարում էր ՌԴ արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոն: Նշյալ հանդիպման ընթացքում Գրիգոր Մինասյանը հանդես է եկել ելույթով, որի շրջանակում ներկայացրել է Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումները,

մասնավորապես՝ ՀՀ-ում Հակակոռուպցիոն դատարանի գործարկման, վերաքննիչ և վճռաբեկ հակակոռուպցիոն պալատների ստեղծման ընթացքը, դատական ակտերի հարկադիր կատարման բնագավառում իրականացված լավարկումները, այն է՝ կատարողական վարույթների էլեկտրոնային հարթակի ստեղծումը և պրոբացիայի էլեկտրոնային հարթակի գործարկումը:

Գրիգոր Մինասյանը մասնակցել է նաև Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոյի մասնակցությամբ Սանկտ Պետերբուրգի XI միջազգային իրավական ֆորումի բացման արարողությանը:

Ֆորումի շրջանակում Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը մասնակցել է նաև արդարադատության նախարարների մասնակցությամբ հանդիսավոր ընթրիքին:

Ֆորումի ընթացքում Արդարադատության նախարարները հանդիպել են Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի նախագահի տեղակալ Դմիտրի Մեդվեդևի հետ:

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը մասնակցել է Ֆորումի լիագումար նիստին:

Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոյի և Սանկտ-Պետերբուրգի մարզպետ Ալեքսանդր Բեգլովի անունից կազմակերպվել է պաշտոնական ընդունելություն բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար, որին մասնակցել է նաև Գրիգոր Մինասյանը:

Ֆորումի շրջանակում անցկացվել են մի շարք պանելային քննարկումներ, որին հնարավոր է եղել մասնակցել ունկնդրի կարգավիճակով: Պանելային քննարկումները վերաբերել են հետևյալ թեմաներին՝ «Իրավունք և հասարակություն», «Արդարադատություն և վեճերի լուծում. նոր իրողություններ և հորիզոններ», «Թվայնացում. ապագայի իրավու՞նք, թե՞ իրավունքի ապագա», «Արդյունավետ իրավունք արդյունավետ պետության համար», «Բիզնես և ներդրումներ պատժամիջոցների իրականության մեջ», «Ինքնիշխան իրավունքը

փոփոխվող աշխարհում»: Յուրաքանչյուր վերոնշյալ թեմայի շուրջ Ֆորումի անցկացման երեք օրերի ընթացքում անցկացվել են տարբեր պանելային քննարկումներ:

ՀՀ արդարադատության նախարար

X

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

Գրիգոր Մինասյան

15.05.2023թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ արդարադատության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը համարը ՀՀ վարչապետի 03.03.2023թ. թիվ 471-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Գրիգոր Մինասյան, ՀՀ արդարադատության նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը ք.Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն
5. Գործուղման ժամկետները 2023թ. մայիսի 10-14-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
☑ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Գրիգոր Մինասյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	235,000	235. 0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	113 ԱՄՆ դոլար	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43,766.03	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	105,038 (4*113$=452$*387,31դրամ=175,064 դրամ, որի 60%=105,038դրամ)	105. 04 (4*113$=452$*387,31դրամ=175,064 դրամ, որի 60%=105,038դրամ)
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	56 ԱՄՆ դոլար	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	21,689.36	
	Օրերի քանակը	5	

	Ընդամենը (դրամ)	108,446. 8	108. 45
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊՍ սրահում*)	10,000	10. 0
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		458,48	458. 48

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ